

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalémkarian Mechitaristengase
M 4 Vienne

VAN

Հանդիս դրամ ելալը որիկի հետեւեալ հասցեով
 ԽՐԱՎՐԱՆԻԹԻՆ «ԻՐԱՎՈՒՆԻՔ» ԼՐԱՎՐԱՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պոստաբախ)

Редакция на вѣст.		Rédaction du journal
„Иравуникъ“		„Iravounk“
ВАРНА (България).		VARNA (Bulgarie)

Խմբագրութեան հաշիւային գրութիւն
էս ձեւ դրկուիր եւ յարմար դասաւ-
ները միայն կը հրատարակուին աւ-
տոգրովին կամ մասամբ:

Իսլանդացիները 20 սուլքիւն երե-
ւին աւելք սնկաւնեւորու ունենաւ 20 0/0
գեղեց կը շինէ:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅՍ

[illegible]

Ռուսմանիրոյ ամեն հայաբնակ
քաղաքներու բահանայք, իրաց
այս դռն վիճակին մէջ, սրբա
ղան պարտականութիւն մը ունի
բուն ջանքեր ի գործ դնել Ազգ
այս զթոյ և մարդասիրութեան
օժանդակութիւնը աւելի արգիւնա
ւոր ընել տալու համար: Առ այս
լուսադոյն ճանապարհն է ամին տեղ
մէկ մէկ մասնախումբ կազմելու
հոնգանակութեան ձեռնարկել
Մեր մէջ տեսնուած և փորձերն ա
մեն ժամանակ և ամին տեղ ցոյ
տուած են, որ երբ եկեղեցականն
և աշխարհականն անկեղծօրէն ո

Քովակնի Եղրայր

ՀԱՐԴԱՆՔԻՆ ԳԱՅԵՐԱԶՄԻՆ, ԼՐԱՅ

վարդանանց պատերազմը, թէև Արշակունեանց հարստութեան անկման 22-23րդ. տարին, այն է 451 յունիս 2ին տեղի ունեցաւ, սակայն իր պատճառները և այդ կանխահաս շարժման հիմն ու կազմակերպութիւնը Արշակունեանց հարստութեան վերջին 25-30 ամեանցից հետ սերտ առնչութիւն ունենալով, հայ և պարսիկ արքունեաց մէջ բանող քաղաքական հայեացներու մասին գրելէ յառաջ կարժէ պատմական ընդհանուր ակնարկ մը նկատել Արշակունեանց հարստութեան քաղաքական ներքին ու արտաքին դրից ու նիստ ու կացին վրայ: Արշակունեանց հարստութիւնը, որ մեր Բիւզանդական պատմագրէն «երկրորդ Արաբատեան տէրութիւն» կը կոչուի, ըսկտաւ 189ին նախ քան զՔրիստոս և տեւեց մինչև 428 յետ Քրիստոսի: Այս հարստութիւնը թէև հին Արարատեան թագաւորութեան շառաւիղներով սկսաւ (Արտաքսիատէ, որ է մեր Արտաշէսը սակայն մինչև իր վերջն չի տեւեց իր յեղին մէջ, Տիրող թագաւորաց ցեղական և տոհմային այլազանութեան համեմատ, Արշակունեանց հարստութիւնը կրնանք երեք շրջանի բաժնել: Առաջին

(*) Բեւեռագիրը արձանագրութեանը լիբրարցուի՝ Արշակունիանց ծագումնաւելի հին կը համարի քան այս թուականը, սակայն մեր ներկայ տեսութեան աղբիւրները, պատմագիրները են եւ ուրեւեռագիրը:

հրդեհատի քաղաքագետ խորամանկութեամբ, Պոստալուց հետ գիտակից և դաշնակից եղած, ահարկու և բազմամեայ ահիզ ընդդիմութենէ մը վերջ, իր դրացիներուն պէս ստիպուեցաւ տեղի տալ հռովմայեցոյ. որովհետեւ հռովմէական ներք խորամանկութիւնը Մեծն Տիգրանայ (նախ քան զՔրիստոսը) Տիգրանը ապրտամբեցուց իր հօր դէմ, և Մեծն Տիգրանը Միհրդատի պարտութենէ վերջ, իր որդւոյն դաւաճանութեանէն ուժարեկ, անկարող գտնուելով դիմադրել հռովմէական ահարկու ուժին, հաշտուեցաւ Պոմպէոսի հետ (68-64) և դաւաճան արքայորդին ընտանեօք զրկուեցաւ ի հռովմ «հանգէս քաջութեան Պոմպէի» ինչպէս կը գրէ Թէոդոր Ռէյնարը իր Միհրդատու եւ պատուր գործին մէջ:

Հայք հռովմէական այս ազդեցութիւնը կրեցին մինչեւ Արշակունեաց տնկումը, որ մասամբ անմիջական հետեւանքն էր հռովմէական պարտութեան յԱրեւելս: Երբ խօսքը հռովմէական մեծագոր կայսրութեան մեր վրայ ունեցած քաղաքական և բարոյական ազդեցութեան վրայ է, ազդեցութեան մը որոյ գաղտնիքը դաւաճանակցութեան մէջ պէտք է փնտռել մանաւանդ վերջերս. պէտք է մոռնալ նաեւ այն պարագան, որ հայ արքունիքը ինչպէս նաեւ աւագանին երբեմնակի հակումներ ունեցած են դէպի Սասանական ուժն: Արքունիքը՝ տիրող քաղաքական հանգամանաց բերմամբ, իսկ աւագանին ու նախարարները շատ անգամ և գրեթէ միշտ իրենց անսանձ ձգտումներուն և վարչական յեղաշրջումներու և բարեկարգութեանց վերահաստատման պատճառաւ, ինչպէս կը տեսնենք Արշակ Բ-ի Տիրանի և Պապի օրով: Սակայն ընդհանրապէս խօսելով, հայ եկեղեցականութիւնը բարոյական վերանորոգիչ տարրը և մատենագրական բնմաւորիչ սաղմը և իրագրէտ անդրադարձումը հռովմէական-յունական պատուաստ

ման մը մէջ գտնելով, հակառակ էր ի հռովմէացիս. մինչ նախարարներն Սասանեան վարպետութիւն և Պարսկական ներգամբիւ կարգներուն խաղալիք եղած՝ իրանեան լուծն ու սուրը կը նախընտրէին:

Արշակունեաց մասին բրած մեր այս ամփոփ և համառօտ տեսութենէն վերջ մեզ կը մնայ Հայ և Պարսկ արքունեաց մէջ տիրող քաղաքական ժխտումներն ու բուռն գծեր:

Հայկական և հռովմէական արքունեաց միջեւ մերթ րարեկամական և մերթ զինակցական յարաբերութիւններն ամբողջով կապին՝ այն է Քրիստոնէութեան հրաշալի ազդեցութիւնը Պարսկ արքունեաց մտահոգութեան մեծ աւարկան եղած էր: Քրիստոնէութեան դէմ սոսկալի հալածում մը սկսաւ Պարսկաստան այն թրւականին, երբ Քրիստոնէութիւնը կընդհանրապէս հռովմէական պետութեան պաշտպանութեամբ յԱրեւելս:

228ին (յետ Քրիստոսի) Պարսկական լուսամտի և ազատութեան հարստութեան կը յաջորդէր մուսուսանդ և բռնապետ Սասանական, պաշտպան և զօրավիգ մագալթոնութեան, այնպէս որ Քրիստոնէութիւնը այնպէս կը ճանչցուէր ի Պարսկաստան ինչպէս այսօր հայութիւնը ի Տաճկաստան: Դաւաճ Բ. երկայնակեաց (309-331) քրիստոնէութեան դէմ սաստիկ հալածանք մղեց, իր յաջորդներուն օրով, մանաւանդ Յազկերտ Ա-ի (400-421) ատեն, որ Սասանեանց ամենէն ներդաշնակ թագաւորն էր: Հալածումը մեղմացաւ: Սակայն 418ին կրկին սաստկացաւ քանի մը տնխոհեմ Քրիստոնէից նա մանաւանդ Արքա Եպիսկ. ին յանդգնութեանն ու տնխոսութեանն պատճառաւ որ Արշաղաշն մը այրեց: Այս թուականէն սկսեալ Սասանեանց գլխաւոր ջանքն եղաւ, հրպարակ Քրիստոնէաները և մանաւանդ հայերը մագալթոնութեան դարձնել, քանի որ Հայք ամենէն

աւելի քրիստոնէայ զօրաւոր տարրն էին Պարսից դէմ:

Արտաշէս Կարապետեան
Շարունակելի

Մ. Խ. Այն յօդուածի շարունակութեան մէջ մասը մեր 27 թիւով հրատարակած էինք. յետագայ մասերն ալ շարունակաբար պիտի հրատարակուին:

ՔԻՕՍՏԵՆՃԵՒ ԳԵՐՄԱՆՈ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՓԱՐԱՆԸ

Քանի մը օր առաջ, բարեկամներէս մին, տեղւոյս Գերմանո-Հայկական դրացիներն արձակուրդի ատեն, անկէ անցած պահուն հետեւեալ բառերը կը լսէ հայ ազգի մը բնիկն իր բնիկի մը ուղղած «ա՛լ հայերէն խօսի՛ր, պատուելին չի կրնար տեսնել որ մեզ պատժէ» այս սրտաշարժ տեսարանին ներկայ գտնուելով չը յուզուէր համար պատուելի մը կարծի ու ցամաք սրտով ունենալու է: Այդ մատաղ սրտով 5-6 ժամուան երկար աւեղողութեան մէջ, աներեւութաբար բռնադատուած են իրենց հօրը լեզուն չը խօսելու և միայն Գերմաներէն սովորած քանի մը կցկատու բառերն ինքնովիւ, ու ինչ անձառու բարեկամներն կը զգան փողոցին մէջ, երբ ինքզինքնին ա՛լ ազատ կը տեսնեն, արդիւրած մայրենի լեզուն խօսելու, ու այն ալ առանց պատիժի: Մեր նախորդ յօդուածով՝ քաղաքին այդ վարժարանին վրայ խօսելով արդէն պարզած էինք կացութիւնը որուն ենթարկուած են հայ ազգայնականները:

Թէ կարելի է յուսալ որ, պատուելին ու իր նմանները եթէ ոչ իր իր խաղի խաղի գոնէ հրապարակային հրատարակութիւններէ քաջուելով եթէ ոչ իր իր լեզուն չը խօսելու օրին իրենց այս զգուշ ինքնազգայն: Պարզապէս բոլորովին միամիտներ եղած պիտի ըլլայինք եթէ բացարձակապէս «ոչ» փոխարին պատասխանը չը տայինք: Այսպէս կրկին ու դառն փորձերէ վերջն ալ խաղալիք իմարտութիւն կը նշանակէ: Պատուելիները օգտուելով հայ ազգի ներկայ տնտեսական կը շարունակեն ընթանալ իրենց տեղի դերին մէջ: Կատարեալ անդադրութեան ու տրոպար կեղծարարութեան հետ երբ կուգայ կը միանայ իր թական կարողութիւնն ալ, այս երկուսի երկարակցութեան ինչ անաւելի աւերումներ չէ կարելի յուսալ:

Կը խօսուէր թէ այս վերջինը բաւականին պահանջ մը ունէր թուրք պաշտօնակալին վրայ եւ թէ Միւսա պատարաս էր իւր Ակն քաղաքի հայ երեւելի մէծթիւ պատանշանի մը հետ փոխանակել այդ գոմարին մէջ կարեւոր մասը:

Հայ հասարակութեան մէջ, խոտորնակ համբաւով եւ իր թական կացութեամբ իրեն համար պարզ մրցակից կարելի էր նկատել Յովհաննէս աղան որ դժբախտաբար անոր մասին միտք անգամ յոգնեցնել չէր մտածեր. յաճախ կուգար անոր դործասենակեր եւ իր տառապանքներն պարծառնութեամբ մտախնդրելով երկար չաղաղութիւններ կը ընէր. Յովհաննէս աղան տաղաւորով կուսկնդրէր անոր խօսքերուն եւ եթէ երբեք չարաթը քանի մը մտաւ տոտր զրախօսութիւններուն կը հանգումէր պատճառը իր բարեկրթութիւնն էր:

Միւսաի այս աստիճան Յովհաննէս

«Մենք Գերմաներէնը չուտով եւ դիւրութեամբ ուսուցանելու համար, վարժարանին մէջ այս լեզուով խօսելը պարտաւորիչ ըրած ենք, ո՛վ կուգէ իր տղան թող զրկէ, ո՛վ չուգէր թող չի զրկէ. մեր պարծին ասանկ կուգայ»: մեր նախորդ յօդուածը կարգաւոր պատուելին այս պատգամները տուած է իր մէկ բանբերին:

Աւելի լաւ չէր ըլլար թէ եւ այս պարագային մէջ կեղծարարութիւնը դեր չէր ունենար - եթէ բացարձակապէս յայտարարէր «Հայ ազգայնական Գերմաներէն սովորեցնելու համար, պէտք է նախ հայութիւնը գերմանականութեան վերածել»:

Տեսէք Պատուելին ինչ մեթոտ ընտրած է հայ ազգայնական Գերմաներէն սովորեցնելու համար: Կրօնադատութիւն ու ամեն դասեր Գերմաներէն կուսկնդրէին, Ազգ. պատուելիներ խաղաղ վարժարանէ վարժարանէ, իսկ հայերէն լեզուն ալ այնպէս, ինչպէս մեր վարժարաններուն մէջ Պարսի. Գերմ. կամ Անգլ. լեզուները կը դասախօսուէին: Ռուսիան, զմեզ իր մէջ ձուլելու համար, մեր բոլոր վարժարանները բռնութեամբ յափշտակեց, ուղղակի միջոց դէպի ռուսացում, բայց գոնէ արտօնեց կրօնքը հայերէն դասախօսելու: Պատուելի Թարայեանց որ Ռուսական կառավարութեան հաշտական այս երկիրը ընկած է ու իբր արգասական կը նկատէ ինքզինքը միթէ բռնութեան, անգլիկան եւ ազգայնականութեան ամենէն սոսկալին չէ՞ որ ի գործ կը դնէ իր ձեռքին տակ եղած հայ ազգայնականութիւնը: Հոս հարկ է բաղադատութիւն մը բռնապետական կառավարութեան ու ազգայնական պատուելիին միջեւ:

Շատեր պատուելին լաւ խորհող ու ամէն պատահականութեանց դէմ զգոյշ գիրք բռնող մէկը կը կարծեն. մեր կարծիքը ատոր հակառակն է, որովհետեւ կը յուսանք որ, եթէ այս ընթացքը շարունակէ, շատ երկար չը պիտի տեւէ հայ ազգայնականութեան իր պարզ յաճախել, եւ այս բանը հարուած մըն է իր գիրքին Գերման միւսօրեային բնիկիւրութեան քով:

Բայց թէ Քիօստենճէյին մինչեւ վերջը համբերող պիտի գտնուի՞ այս ճիգ-ուրիշական տնտեսական հանգիստ, առանձին յօդուածի մը նիւթ ընկնով, այս կէտին վրայ խօսինք յառաջիկային:

(*) Այս ճիգի տեղեկութիւնները յաղած եմ մէկ քանի բարեկամներու տղաքներէն, որոնք այդ վարժարանը կը յաճախեն եւ ուրիշ աներկայիս աղբիւրներէ:

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ(6) ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Նախորդ գլուխին մէջ ըսինք որ Ծուշան եղբայր մ'ունէր Միւսա աղան եւ թէ սա վախճանութեամբ կը զգար. իր առեւտրական գործը աջող պայմաններուն մէջ կը գտնուէր. հօրմէն ժառանգած էր կողիկ դրամագլուխ մը եւ իր գործունէութեամբ հետզհետէ առաջանալու վրայ էր: Եթէ Յովհաննէս աղան ազգին մօտ մեծ ու բարի համբաւ ունէր, սա ալ՝ կառավարութեան մօտ տեղւոյն ամենէն սիրուած հայը նկատուած էր. քաղաքին եւ շրջակայներու բանիմաց հայերը շատ վստահ աչքով չէին նայեր իրեն վրայ թէպէտ

յայտնի իր մէջ գործը չէր տեսնուած. գիտցուածը սա էր որ Միւսա աղան իր փոքրիկ հասակէն փառասիրութեան սրբող ունէր իր սրտին մէջ. իր խօսքերէն կը յայտնուէր որ Սովորական կառավարութեան ամենահաստատար չպատահներէն էր եւ թէ պատուանուն մը կամ շքանշան մը անգին նշանակութիւն ունէր իրեն համար. չարաթը քանի քանի տղապան կերթար կուգար Գայմագլուխ մօտ, իր հաղարտ մէջ լիսի փաղաքյանքներով եւ կեղծ ու պատիւ ձեւերով յարգ ու պատիւ տալու: Կամար. քայմագլուխ Ռիզա էֆէնդին որ Միւսաի տկար կողմերը շատ լաւ ուսումնասիրած էր, ուրիշութեամբ կը ընդունէր զինքը իր ներկայութեանը: մինչեւ իսկ հրապարակ խոստումներ ընելու մէջ չէր վարաներ եւ քաջապէս համոզուած էր որ կաթնտու կով մըն էր ան: Ուզած գիտով իրեն պէտք եղած փոխառութիւնը կընէր Միւսա.

ազայի մօտեցումն մէջ ուրիշ հանգամանք մըն ալ կար. գիտեր որ ասիկայ աղջիկ մը ունէր՝ զեղանի Հրանդշը, զոր մտայրած էր կնութեան տունը, եւ իր գործի մասին բրած մերկայաբար նոց յայտնութիւնները պարզապէս աղջկան հօրը աչքը չլացնելու համար էր. Յովհաննէս աղա ու չաղար իրեն անգամ դարձուցած չէր անոր ներքին նկատումներուն վրայ, մինչեւ տարի մը առաջ՝ երբ Միւսաի մայրը ախկին Սաթիկի, օր մը Յովհաննէս աղայի տունը եւ այնքան ատեն, ախկին Վերդինէլ Հրանդշը Միւսաի տնկելու միտք ունենալուն վրայ խօսած էր, տիկին Վերդինէլ առաջ պատասխան չէր կրէր. ցած աղ Միւսաի մօրը եւ երկրորդ անգամ երբ ախկին Սաթիկի խօսք բացած էր, Յովհաննէս աղայի հետ այդ մասին կարծիքի փոխանակութիւն ունեցած ըլլալով, «գեռ պղտիկ է ժամանակ ունի» պատասխանը տուած էր:

Հիմա, որ գործը մոտ թիւն մէջ ու ան-
հոգի կը կատարուէր, հրապարակ
հանուելով մամուլին յանձնուեցաւ:
ինչպէս որ ազգերու յառաջդիմութեան
ամենէն հզօր ազդակներէն մին անկեղծ
ու անշահախնդիր մամուլն է, նոյնպէս
ալ հանրութեան շահերը պաշտպանե-
լու համար ամենէն կարողը ու ձայնը
հասարակութեան յետի ընելու գիրք
ունեցողը. անոր մէջ կը ծնունդն խն-
դիրները, կը պարզուին գաղափարնե-
րը ու ամէն գիմակուորներ գիմակա-
գիրք կ'ըլլուն:

Նոյն մըն ալ Ռուսական կառավա-
րութեան անասնոթ ու ստոր ընթացք-
ներէն, զորս ունի զէպի Հայերս: Ան-
շուշտ ասկից երկու ամիս առաջ իմա-
ցաք Քիւրդի մը, արձարանին մէջ, Բա-
ղէշի Բարսեղ անուն երիտասարդ մը
բէլլովէյով սպաննելը: Անցած շաբ-
թու զատավարութիւնը կատարուեցաւ
եւ... Քիւրդը երէք ամիս բանտար-
կութեան դատապարտուեցաւ: Կը տես-
նէ՞ք քանի մը հազար Ֆրանգին հրա-
շագործութիւնը զոր Քիւրդները իրենց
մէջ հաւաքելով հիւպատոսին ձեռքով
... ին բերանը գնելու կանխահո-
գութիւնը ունեցած էին:

99 ապրիլ 25 Մ.
Քջօստէնէ

ԼՐԱՔԱՂ

Կ. Պոլսոյ ազգ. գործերու մօ-
տէն ծանօթ եւ լաւատեղեակ կա-
րեւոր անձի մը նամակին հետեւ
եալ հատուածը մեզ հաղորդուած
է, որ կը հաստատէ մեր պոլսական
թղթակցի գրածները:

«Ինչու կը զարմանաք Օր-
մանեանի Ռուս սննդին Ս. Էլմի-
ածնայ թիւմականութենէն հա-
նելու ուղղակի եւ անուղղակի
ջանքերուն վրայ, մարդը կուզէ իր
Պատրիարքութեան հետ միացնել
կրիկիոյ կաթողիկոսութիւնը, եւ
իւ նպատակին հասնելու համար
պէտք է նախ փոքրացնել Էլմիա-
ծինը, ասոր համար ալ անշուշտ
գործիքներու պէտք ունի »:

— «Միտ թիւն» ի գրածին նայե-
լով, կարեւոր գործիչներէ մին ար-
տասահմանէն Օրմանեան Պատրի-
արքին սպառնական խիստ նամակ

ը գրելով խորհուրդ տուեր է շու-
տով հրաժարիլ Պատրիարքութե-
նէ, հակառակ պարագային կհան-
քը վտանգի տակ ըլլալը ծանու-
ցեր է:

— Կրետէէն նոյն թերթին կը
գրեն թէ Տէր Մանուէլ քահանայ
Գանտիա ժամանիլէն ի վեր տեղ
այն Հայկական մատուռը նորոգե-
լու համար եղած բոլոր ջանքերը
գրեթէ ապարդիւն մնացած են:
Քահանան Անգլիացի բարձրաստի-
ճան պաշտօնէից թէեւ կրկնակի
գիմուքներ Ընքեր է, բայց սա բա-
յասական պատասխանը ստացեր է
«Անգլիացիք ինքէն մէջ լոկ գին
ւարական իշխանութիւն ունին ո՛չ
թէ քաղաքական. ուստի կզլույս
կառավարիչ Եորկիոս իշխանը երբ
Գանտիա ոյցելէ, անոր ողբերգա-
գիր մը տուէք ձեր եկեղեցւոյ պա-
հանջներուն գոհացում տալու հա-
մար »: Բայց իշխանին Գանտիա
այցելելն անորոշ կերպով յետա-
ձգուած է:

— Նախարարութեան եկած վեր-
ջին հրահանգին համեմատ բոլոր
Պոլսեանի մէջ քաղաքապետա-
կան ժողովոց ընտրութիւնները
մայիս 9ին տեղի պիտի ունենան,
բայց այս անգամ ոչ-պոլսկար հա-
սարակութեանց վարժարաններու
հոգաբարձութիւնանց ընտրու-
թիւնները յետաձգուած են յառա-
ջիկայ սկստեմբերին:

— Տիար Կ. Յ Պատմաճեանի
Բանասէր անուն հնարասական,
պատմական, լեզուաբանական եւ
քննական հանգէսի տառջին թիւը
հրատարակուած է: Նոսեւ «Թոթով-
մունք» խորագրով 32 երեսներէ
բաղկացեալ Ս. Զ. ի նոր ապագր-
եալ տետրակն ստացանք. սա կը
ծախուի 25 սանթիմի:

— Կիւրակէ օր Ռուսոստեղի ազ-
գայինք տեղւոյն եկեղեցւոյ բակին
մէջ 2,000 հոգիէ բաղկացեալ մի-
թինկ մը կազմած են, ուր որոշ-
ուած է Լա Հէյի զեապանաժողովին
ներկայացնել հայկական խնդիրը.
եւ այս նպատակաւ պատուիրակ ըն-
տրուած է Տիար Մինաս Չերազ:
— Անցեալ ուրբաթ օր Յունաց

նական զոյգը հաւասարապէս երջանիկ
օրիւ պիտի վայելէ: Ծիկին Վերգինիէ
եւ ամուսինը դիւրաւ այս բանը կու-
հած էին: Մինաս աղա հնարք գտնելու
զրազած ատեն, մինչեւ անցած միտքը
զրած էր բիրտ ուժի ալ զիմն փափա-
զը տեղը տանելու համար. եւ գիշեր
մը, իր մօրը տիկին Սաթնիկին ը-
սած էր որ «ընեք չընեք Հրանդը իր
տունը հարս պիտի բերեք »:

«Երկրորդ անգամ մը ալ կառավար-
չեմ գաւազան, ըսաւ մայրը, եթէ տը-
ւին ի՞նչ աղէկ եթէ ոչ աշխարհին մէջ
աղջիկ չի պակսիր »:

— Իմ ուզածս ուրիշը չէ, Հրանդն
է, կրկնեց Մինաս աղան:

— Բայց երբ քու ուզածդ չեն տար:

— Պիտի տան:

— Բայց ի՞նչպէս պիտի ըլլայ այդ,
հարցուց անձկանօք մայրը:

— Ինչպէ՞ս... պատասխանեց Մինաս
ակաւ մը շունչ առնելով, ինչ որ պի-

Տ. Կոստանդինուս Պատրիարքը
եկեղեցականներու եւ ժողովական-
ներու ընկերակցութեամբ այցելած
է մեր Ազգ. Պատրիարքարանը,
ուր պատշաճ ընդունելութիւն եւ
ղած է հիւրերուն: Յունաց Պատ-
րիարքը յետոյ Մայր եկեղեցի մըտ-
նելով աղօթած եւ սեղանին վրայէն
բանաստեղծութիւն մը ըրած է յու-
նարէն լեզուաւ, յորում չէ մոռցած
Սուլթանի համար ալ սա խօսքե-
լը արտասանել. «Աղօթենք վասն
երկարակեցութեան հպատակասէր
Սուլթան Ապտուլ-Համիտ Աբդա-
լին մերոյ, որոյ արտին ներշնչէ
Բարձրեալն բարի կամեցողութիւն
իւ հովանաւորութեան ներքեւ
եղող հպատակաց համար »:

— Բաղէշէն կը գրեն թէ՝ Ամե-
րիկացի միսիոնար Մր. Քօլի ձե-
ռամբ 450 ժօտ աղքատ ընտանի-
քի հաց կը բաժնուի. ասոնց 267ը
գաղթական (կիւրդ) եւ մնացեալ
183ը տեղացի են եղեր:

ՅՈՒՂԱՆԻ ԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ
Տ. ԱԶԱՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ

— Կիրակի օր հայ-հռովմէակա-
նաց Պատրիարք Տ. Ազարեանի
յուզարկաւորութիւնը կատարուած
է հանգիստաւ կերպով: Հայ-Հը-
ռովմէականներէ զատ ձայնաւոր
պատարագի արարողութեան ներ-
կայ գտնուած են Յունաց Պատրի-
արքները, Բարձրական Հայոց ազ-
գապետը, Հրէից Բարձրագիտին
կողմէ երկու խախափներ, Յոյն
կաթողիկ, Ասորի եւ ուրիշ օտար
եկեղեցականներ, նաեւ Լատին մի-
աբանութեանց ներկայացուցիչնե-
րը. այս բազմութեան մէջ նշմար-
ուած են մեր ազգակիցներէն ծու-
նօթ մի քանի աշխարհականներ:
Երեւոյի պալատին եւ նախա-
րարութեանց կողմէ բարձրատի-
ճան պուշտօնեաներ, նաեւ Ֆրանսա-
կան, անգլիական, իտալական,
աւստրիական եւ ամերիկեան դես-
պանները իրենց թարգմաններով,
ու գերմանական եւ ռուսական

տի ըլլալ... Գալմագամ Բիգաւ Էֆէն-
տին մտերիմն է...:

— Վերջը:
— Անոր միջոցով հրաշայի ծուղակ մը
պիտի յարիմ, Յովհաննէս աղան ալ թէ
Յովհաննէս աղա է թո՛ղ մէջէն ելնէ.
զինքը միտիւրի վրայ պիտի նստեցնեմ եւ
թէ Հրանդը ինձ տուելու հաւանութիւն
չի տայ:

— Տէր Աստուած:
— Պէտք է որ աս ասպէս ըլլայ, շա-
րունակեց Մինաս խեղդուկ եւ կատա-
ղի ձայնով մը. ի՞նչ, ինձնէ աղէկին
պիտի տան թէ չէ այդ լուսի պէս ազ-
ջիկը գրպանը ծակ վահարմին պիտի
տան, ինչ է քանի մը լեզու մոլորալ
զիտէ եզեր, Վահրամին, որուն պէս
տասը հատ ծառայ ունիմ հրամանիս
տակ:

— Բայց զաւակս ո՞վ կըսէ թէ վահ-
րամին պիտի տան:

— Մոռցի՛ր զաւակս, կամ համբերող

թարգմանները, դրամատուներու
տնօրէններ, պետական հայ եւ հայ
հռովմէական պաշտօնատարներ
յուզարկաւորութեան առթիւ ներ-
կայ գտնուած են: Արարողու-
թեանց աւարտելէն վերջ ներկայք
Պատր. Տեղապահ Տ. Աւետիս
արքեպիսկ. Արքիարեանի եւ Ազար-
եան ընտանիքի ներկայացուցիչ
Պետրոս էֆ. Ազարեանի ցաւակ-
ցութիւն յայտնելէ վերջ մեկնած
են:

Յետոյ մեռելը պղինձէ դագա-
ղի մը մէջ ամփոփուած՝ քառաձի
կառքով մը եւ առանց հանդէսի
Սագըզ աղաճի եկեղեցիէն փոխա-
դրուած է Ս. Աստուածածին եկե-
ղեցին, ուր պիտի ամփոփուի յա-
տուկ դամբարանի մը մէջ:

Մօնիդէօնի տեղեկութեանց հա-
մեմատ, Ազարեան Պատրիարքը
իր մահէն առաջ կարգադրած է
եղեր որ իւր ազգականներուն մնայ
իւր հարստութիւնը որ 40,000 ոս-
կիւ կը հասնի, կըուի:

ՎԱՐՆԱ ՄԻԹԻՆԿԻ
ՎԷ ԹԻԻՃԱՐ ՎԷՔԻԼԻ

Ձար հազրէթլէրինին թէքլիֆի
իւղրէ՝ տիւնեա իւզէրինտէ հաշա-
յան մէտէնի վէ նիմ մէտէնի միլլէթ-
լէրին պէտպախաղընա պաշլընա
սէպէպ օլան մուհարէպէ վէ մու-
խասէմէյէ միւլքին օլաղը գա-
տար նիհայէթ վէրմէք մագսէտի
իլէ Հօլանտանըն Լա Հէյ շէհրին-
տէ թէճէմմիւ օլընաճագ գօնֆէ-
րանս հէր միլլէթ վէ ճէմաթըն
տըգգաթընը ճէլպ իթմիշ օլաղը
կիպի էրմէնի միլլէթինին տախի
նաղարը օլ թարաֆա աթֆ օլը-
նաճաղը թապիր իտի: Հէր հալտէ
մէտէնիլէթ ու մէտրիֆին Շարգա
տուխուլինէ բահպէր օլան էրմէնի
միլլէթի թէքլի սիլահ մէտէնիսին-
տէ տուլկուսըզ գալամալաճագ ը-
տը. մէզքիւր գօնֆէրանսա իշթի-
րաք իտէպիլմէք իշիւն հէր նէ
գատար էրմէնիլէրին օրտուսը վէ
ղըրհլըրըր եօզ իսէտէ, հըստի-

եղի՛ր, ըսաւ վերջին անգամ մըն ալ
տիկին Սաթնիկի:

— Այո՛, Յովհաննէս աղան, Վահրա-
մըն ալ մէկտեղ պիտի փճանան եթէ
իմ կամքս չը կատարուի, շեշտեց Մի-
նաս հպարա եւ ինքնավստահ թափով
մը:

Այս խօսակցութիւնը ծրագայոցի
երեկոյին տեղի ունեցեր էր ճաշէն ա-
ռաջ երբ նոյն օրը Մինաս ըստ բաւա-
կանի արքած վիճակի մէջ տուն վերա-
դարձաւ:

Շ. Կամաւարական
(Շարունակելի)

